

Ո՞վ կը գԱՑ իՆԶ ՀԵՏ...

Տանջուած, արիւնոտ իմ սրունքներով,  
Անապատների փոշին լանջերիս,  
Մըրիկների վէս ու խօլ յոյզերով,  
Ես պիտի քայլեմ մռայլ իմ ուղիս...  
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Բիբերիս վերև երազ մ'անսահման,  
Ու լուռ ճակատիս՝ անհուն ճիպերի  
Ճաւադին ու մունջ ակօսներ լայն-լայն,  
Ես պիտի քայլեմ ըմբոստ, քաջարի,  
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Ապառաժները կը ճեղքին իմ սիրտ,  
Ու կ'արիւնոտին փուշերն իմ ճակատ,  
Ինձի կը ճնշին և խաւարը թիրտ,  
Եւ շղթան... բայց ես կը քայլեմ հպարտ...  
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Եւ դեռ... կ'արիւնի իմ թիկունքը մերկ  
Տառապանքի մութ ժայռերը գրկած,  
Ու վէրքերս ձեզ կը համրեմ մէկ-մէկ,  
Բայց և կը քայլեմ հպարտ անձնուրաց...  
Ո՞վ կը գայ ինձ հետ...

Հոգիս, բարձրերի երազովս իր սէգ,  
Պիտ ապրի կեանքի մեծ երկունքն յաւէտ,  
Ճաւատանջ, մենակ, ու վաստակաբե՛կ—  
Ահ, պիտ քայլեմ միշտ... ով կը գայ ինձ հետ...

1904 թ.

Հր. Թալեսն